ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԻԿՅԱՆ
Ֆինանսներ, բակալավրիատ, 2-րդ կուրս

ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. *գնաճ, հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականություն, ԿԲ գործիքակազմ, դոլարացում, փողայնացում, ուժեղ դրամի քաղաքականություն*

Գնաճի և ազգային արժույթի փոխարժեքի կարգավորման գործընթացն էական ազդեցություն ունի ՀՆԱ-ի, արտահանման աճի և ՀՀ պետական բյուջեի կատարման վրա: Միայն համաձայնեցված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունն է նպաստում ՀՀ տնտեսության զարգացման սցենարի լավարկմանը: Համադրված դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է ստեղծի այնպիսի հարաճուն ու կայուն մակրոտնտեսական միջավայր, որը հնարավորություն կտա հասնելու ինչպես կարճաժամկետ, այնպես էլ՝ միջին և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի:

ԵԱՏՄ-ին Հայաստանի անդամակցությամբ մեզ համար առաջ են գալիս նոր հնարավորություններ՝ բացահայտելու տնտեսական ներուժը այդ միության մեջ, որը կոչված է ապահովելու ՀՆԱ աճ, կյանքի բարձր որակ, լայն և պաշտպանված շուկա, ներդրումների աճ արտահանող հատվածներում, տրանսպորտային փակուղու հիմնահարցի լուծում, էներգետիկայի ոլորտում երկարաժամկետ լուծումներ:[1] Սակայն եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում դեռևս առկա են դրամավարկային և արժութային քաղաքականությունը խոչընդոտող հիմնահարցեր, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են թողնում երկրի կենսամակարդակի, ՀՆԱ աճի տեմպի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա: Այդ հիմնահարցերն են՝

- ԿԲ գործիքակազմի պակասը,
- ՀՀ դրամի հանդեպ վստահության ցածր աստիճանը,
- Տնտեսության դոլարացման մակարդակը,
- Տնտեսության փողայնացման ցածր աստիճանը,
- ՀՀ դրամի անկայունությունը,
- ՀՀ և ԵԱՏՄ մյուս պետությունների մակրոտնտեսական ցուցանիշների զուգամիտման ցածր մակարդակը,
- ՀՀ հիմնական գործընկեր ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները,
- Էներգակիրներ ներմուծող երկրի կարգավիճակը,
- Տնտեսության մասշտաբների տարբերությունը ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների համեմատությամբ,
- ՀՀ տնտեսության բաց լինելը արտաքին ազդակների առջև:

[1] Տե՛ս https://eabr.org/analytics/integration-research/cii-reports/armeniya-i-ts-otsenka-ekonomicheskogo-effekta-integratsii/ էջ 18:

Ստորև, պայմանավորված ՀՀ-ում առկա հիմնախնդիրների առանձնահատկություններով, վերլուծենք ՀՀ դրամավարկային քաղաքականության մի քանի գործիքի ազդեցությունը: ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականության նպատակը գների կայունության ապահովումն է:[1] Այս համատեքստում ԿԲ-ն վարում է գնաճի թիրախավորման քաղաքականություն, որը որդեգրվել է 2006 թ.: Գների կայունության ապահովման առումով վերջին տարիներին, ընդհանուր առմամբ, ԿԲ-ն կատարել է իր առջև դրված հիմնական խնդիրը՝ ապահովել գնաճի պետական բյուջեով սահմանվող 4±1,5%-ային ցուցանիշը: Կայունարար ազդեցությունը առավել ցայտուն է դրսևորվում՝ համեմատելով ԵԱՏՄ անդամ պետությունների նույն ցուցանիշները, ըստ որի՝ Հայաստանը գնաճի տարեկան ցուցանիշներով ամենացածր մակարդակի վրա է:



Գծապատկեր 1

Սակայն հարկ է նշել, որ գնաճի թիրախավորման քաղաքականությունն իրագործելիս անհրաժեշտ է ուսումնասիրել դրա ունեցած կողմնակի հետևանքները: Ցածր գնաճը այս քաղաքականության պայմաններում կենտրոնական բանկերի հիմնական նպատակն է: Սակայն միայն այս նպատակի վրա հիմնվելը կարող է բացասաբար ազդել այլ առանցքային փոփոխականների վրա: Ինչպես ընդգծում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) փորձագետներից Օլիվիե Բլանչարդը, ֆինանսատնտեսական ճգնաժամը ցույց տվեց, որ գնաճի մասին նախկին պատկերացումները սխալ էին. գների կայունությունն ինքնաբերաբար չի հանգեցնում աշխատատեղերի ստեղծմանը, աղքատության կրճատմանը և տնտեսական աճին:[2]

Չնայած ՀՀ-ն պաշտոնապես որդեգրել է լողացող փոխարժեքի քաղաքականությունը, այնուամենայնիվ, վերջին տարիներին իրականացվել են արժութային միջամտություններ: Հայաստանը դասակարգվում էր որպես լողացող փոխարժեքային քաղաքականություն ունեցող երկիր, իսկ 2014 թ.

[1] Տե՛ս ՀՀ օրենքը Կենտրոնական բանկի մասին, Հոդված 4:
[2] https://www.imf.org/external/pubs/ft/spn/2010/spn1003.pdf

դասակարգված էր որպես պակաս ճկուն՝ մասամբ սահող փոխարժեքային քաղաքականություն ունեցող երկիր: 2014 թ. ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների արժույթները դոլարի նկատմամբ արժեզրկվեցին: ՀՀ դրամը, ի դեպ, ի տարբերություն ԵԱՏՄ անդամ այլ երկրների արժույթների, ամենաքիչը արժեզրկվեց: Այս հանգամանքը Հայաստանին տրվեց որոշակի կորուստների գնով՝ կապված արժութային միջամտությունների համար ներգրավված միջոցների աղբյուրների հետ: Այսպես, 2014 թ. ընթացքում ՀՀ միջազգային պահուստները կրճատվել են ավելի քան 35%-ով՝ 2,11 մլրդ դոլարից նվազելով մինչև 1,26 մլրդ դոլար: 2015 թ. միջազգային պահուստների վրա ճնշումների նվազումը, ինչպես նաև փոխարժեքի կայունացումը հիմնականում պայմանավորված են եղել ռուսական դրամավարկային քաղաքականությամբ՝ կապված ռուբլու փոխարժեքի կայունացման հետ և 2015 թ. մարտին ՀՀ ԿԲ թողարկած եվրոբոնդերի հետ:

Բացի պետական պահուստներով տեղի ունեցած միջամտություններից, ԿԲ-ն դիմել է նաև բազմաթիվ այլ գործիքների կիրառման: 2014 թ. ավարտին նախ լոմբարդային տոկոսադրույքը բարձրացվեց մինչև 21%: Բացի դրանից, առաջին անգամ կիրառվել է դրամավարկային քաղաքականության երրորդ՝ պարտադիր պահուստավորման գործիքը: Այսպես, պարտադիր պահուստավորման դրույքը բարձրացվեց կրկնակի՝ նախկին 12%-ից մինչև 24%: Երբ արժութային շուկան կայունացավ, 2015 թ. սկզբին ՀՀ ԿԲ-ն նվազեցրեց այն մինչև 20%, իսկ լոմբարդային գործարքների տոկոսադրույքը՝ 12%:

Ինչ վերաբերում է վերաֆինանսավորման տոկոսադրույքի կիրառմանը, ապա ԿԲ-ն վերջին տարիներին ակտիվորեն օգտագործել է այս գործիքը: Հատկանշական է, որ նույնիսկ գնաճի մակարդակի կանխատեսված լինելու պայմաններում 2014 թ. ՀՀ ԿԲ սահմանած տոկոսադրույքը բավական բարձր է եղել: Այսպես, դրամի արժեզրկման պարագայում, պահպանելու համար գնաճի նախանշված ցուցանիշը, ԿԲ խորհուրդը 2014 թ. բարձրացրել է տոկոսադրույքը 3,75%-ով՝ մինչև 10,5%: 2015 թ. վերջին արդեն այն կայունացել է 8,75-ի սահմաններում, իսկ 2016 թ. մարտի տվյալներով կազմել է 8,25%:

Արտահանման վրա ազդեցության առումով փոխարժեքի քաղաքականության անհամաչափ փոփոխությունների արդյունքում հայկական դրամը շատ քիչ է արժեզրկվել դոլարի նկատմամբ՝ ռուսական ռուբլու զգալի արժեզրկման պայմաններում, և ՀՀ արտահանող ձեռնարկությունների արտադրանքը դոլարային արտահայտությամբ ունի բարձր ինքնարժեք, ինչն ուղղակի անմրցունակ է դարձնում հայկական արտահանումը ՀՀ հիմնական գործընկեր երկիր՝ ՌԴ: Հատկանշական է, որ հայկական դրամի արժեզրկումը դոլարի և եվրոյի նկատմամբ, ԵԱՏՄ անդամ երկրների համեմատությամբ, ամենափոքրն էր: Արդեն 2014 թ. ՀՀ արտահանումը դեպի ՌԴ կրճատվել է 8%-ով, իսկ 2015 թ.՝ ևս 8.8%-ով: Ընդ որում, փոխադարձ առևտրի ծավալները կրճատվել են ԵԱՏՄ գրեթե բոլոր երկրների հետ, մինչդեռ ՀՀ-ն 2015 թ. արտահանման 2.8% աճ է գրանցել (աղյուսակ 1, 2): Հարկ է նշել, որ 2015 թ. դրամ–դոլար փոխարժեքը հիմնականում կայուն է եղել՝ պայմանավորված ԿԲ միջամտություններով, վերջինն էլ իր հերթին՝ դեպի նոր շուկաներ արտահանումով, զբոսաշրջության օգուտներով և ներկրման էական կրճատումով՝ 35.3%:

Աղյուսակ 1

ԵԱՏՄ անդամ պետությունների արտաքին առևտուրը երրորդ երկրների հետ, 2015 թ.՝ 2014 –ի համեմատ, մլն ԱՄՆ դոլար

	Արտահանում	Ներմուծում	Սալդո	2014 թ. համեմատ	
				արտահանում	ներմուծում
ԵԱՏՄ՝	374107,0	205386,7	168720,3	67,3	64,7
այդ թվում					
Հայաստան	1253,4	2218,9	965,5	102,8	67,5
Բելառուս	15688,6	13105,6	2583,0	78,8	72,0
Ղազախստան	40838,8	19292,7	21546,1	56,5	73,3
Ղրղզստան	1136,7	2063,2	926,5	91,2	66,8
Ռուսաստան	315189,5	168706.3	146483,2	68,4	63,3

ՀՀ-ն, պայմանավորված առևտրում ներմուծման բաժնի մեծությամբ, կրում է գնաճի ազդեցություն: Հարկ է նաև նշել, որ հաշվի առնելով ՀՀ-ի՝ էներգետիկ ռեսուրսներ ներկրող երկրի կարգավիճակը՝ առանձին կարևորություն է ներկայացնում հատկապես գազի գինը և դրա ազդեցությունը տնտեսության վրա:

Աղյուսակ 2

ԵԱՏՄ անդամ պետությունների ապրանքների փոխադարձ առևտրի ծավալները 2015 թ.

	Մլն ԱՄՆ դոլար	2014-ի համեմատ	Կշիռը ԵԱՏՄ ընդհանուր առևտրի մեջ
ԵԱՏՄ	45379,8	74,2	100
Հայաստան - Բելառուս	33,3	86,9	0,07
Հայաստան - Ղազախստան	5,6	75,8	0,01
Հայաստան -Ղրղզստան	0,5	108,1	0,00
Հայաստան -Ռուսաստան	1274,2	91,2	2,82

Փոխարժեքների տատանումների համատեքստում էներգակիրների գնի վրա մեծապես կարող է ազդել փոխադարձ առևտրում ազգային արժույթների կիրառումը: Այս հիմնախնդրի լուծմանն է ուղղված ԵԱՏՄ պայմանագրի հոդված 64-ը: Սա իր հերթին կհանգեցնի ազգային արժույթների հանդեպ վստահության ամրապնդմանը, ինչպես նաև դրանց կայունացմանը: Այս առումով բնական գազի գնի՝ ռուսական արժույթով ձեռք բերումը կհանգեցի ոչ միայն մակրոտնտեսական դրական ներգործության Հայաստանի տնտեսության վրա, այլև կունենա սոցիալ-տնտեսական դրական ազդեցություն:

Փոխարժեքի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջոցով դրամը արժևորվել է՝ տնտեսության մեջ արտաքին պահուստների հաշվին միջամտություններ կատարելով: Արժևորված դրամի պարագայում, ընկնում է երկրի արտաքին մրցունակությունը: Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից անհրաժեշտ է ուսումնասիրել նաև դրամավարկային մեկ այլ կարևոր փոփոխական՝ տնտեսության փողայնացման մակարդակը: Այս ցուցանիշը ՀՀ-ի պարագայում գտնվում է ցածր մակարդակի վրա, ինչը հանգեցնում է տնտեսության դոլարացման:

Ամփոփելով ՀՀ ԿԲ վարած դրամավարկային քաղաքականությունը՝ կարող ենք նշել, որ ՀՀ ԿԲ-ն վարում է ներքին կայունությանն ուղղված խիստ նպատակադրման քաղաքականություն՝ այդպիսով երկրորդական պլան մղե-

լով արտաքին կայունության գործոնները: Ներքին կայունության նպատակի հետապնդումը ենթադրում է գնաճի խիստ թիրախավորում, և դրամավարկային հիմնական գործիքները ծառայում են այս նպատակին: Այս քաղաքականությունն ինտեգրման, բարեկեցության պայմաններում կարող է հանգեցնել հակառակ էֆեկտի՝ գների աղավաղված մակարդակի, կապիտալի արտահոսքի դեպի միության անդամ այլ երկրներ, պետական պարտքի մեծացման և այլն: Այսպիսով, դրամավարկային քաղաքականության տարատեսակ գործիքների փոխկապվածությունը և դրանց ազդեցությունը տնտեսության վրա հրամայական է դարձնում այս ուղղությամբ համակարգված և հաջորդական քայլերի իրականացումը: Այս իմաստով առանձին ուշադրության է արժանի հատկապես ԵԱՏՄ ինտեգրման շրջանակներում դրամավարկային քաղաքականության համակարգումը՝ որպես տնտեսական ինտեգրմանը նպաստող գործոն:[1]

Եվրասիական տարածաշրջանը, որպես մակրոաշխարհի մեկ բաղադրատարր, այսօր հավակնում է դառնալ համաշխարհային տնտեսության զարգացած բևեռ: Հայաստանն այս գործընթացի մաս է կազմում և պետք է ինտեգրման հնարավորություններն օգտագործի տնտեսական զարգացման ներուժի իրացման տեսանկյունից: Վերը շարադրվածից հանգում ենք հետևյալ եզրակացություններին և դրանց հիման վրա առանձնացնում առաջարկություններ:

Հայաստանի մակրոտնտեսական արդյունքները վերջին 2 տարում պայմանավորված են եղել արտաքին շոկերի, հատկապես՝ հիմնական տնտեսական գործընկեր ՌԴ տնտեսության անկման ազդեցությամբ: Այս համատեքստում առաջացած խնդիրներին ՀՀ դրամավարկային քաղաքականությունն այնպիսի լուծումներ է առաջադրում, որոնք իրավիճակային են և բխում են օրակարգային հիմնահարցերի տրամաբանությունից: Այս առումով ԿԲ-ի քաղաքականությունը պետք է լինի նախաձեռնողական և արագ արձագանքի մակրոտնտեսական փոփոխություններին: Բացի առևտրային խոչընդոտներից, մաքսատուրքերի վերացումից, եվրասիական տնտեսական ինտեգրումը պետք է հանգեցնի ներդաշնակ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականության ներդրմանը՝ հիմնված ընդհանուր սկզբունքների կանոնների վրա: Այս առումով ՀՀ-ն քայլեր պետք է ձեռնարկի՝ բարելավելու ներդրումային միջավայրը և ազատականացնելու ներքին շուկան՝ դառնալու համար բարենպաստ վայր ԵԱՏՄ խոշոր կապիտալի կենտրոնացման համար: Այս համատեքստում առանձնացրել ենք ՀՀ դրամավարկային քաղաքականության մրցունակության բարձրացման ուղղությամբ ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության հետևյալ առաջնահերթությունները եվրասիական տնտեսական ինտեգրման շրջանակներում:

1. Ուժեղ դրամի քաղաքականությունը, հենվելով միայն ներքին կայունության՝ գնաճի խիստ թիրախավորման քաղաքականության վրա, իր կողմնակի ազդեցությունն ունեցավ դեպի ԵԱՏՄ այլ երկրներ, մասնավորապես՝ դեպի առևտրային հիմնական գործընկեր ՌԴ արտահանման կրճատման, բիզնես ակտիվության նվազման, մյուս կողմից՝ արտաքին պահուստների

[1] file:///C:/Users/User/Downloads/the-impact-of-monetary-policy-on-the-trade-balance-of-the-republic-of-armenia.pdf

կրճատման վրա: Այս առումով անհրաժեշտ է, որ ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականությունը լինի առավել ճկուն, բխի օրակարգային հիմնահարցերի տրամաբանությունից և հաշվի առնի նաև արտաքին կայունության նպատակը:

2. Վերաֆինանսավորման գործիքի կիրառումը երկարաժամկետ հատվածում կարող է ցածր գնաճի փոխարեն հանգեցնել սպառողական գների աճի՝ պայմանավորված ապրանքի ինքնարժեքի բարձրացմամբ: Այս առումով անհրաժեշտ է վերանայել վերաֆինանսավորման տոկոսադրույքը:

3. Ռազմավարական իմաստով կարևորագույն նշանակություն ունի հատկապես ֆինանսական շուկաների ինտեգրմանը նվիրված 70-րդ հոդվածը, որը նախատեսում է կենտրոնական բանկերի հետ համագործակցություն և ֆինանսական վերահսկման կառուցակարգի ներմուծում: Ֆինանսական շուկաներ ինտեգրումը դրական ազդեցություն կունենա բիզնես միջավայրի բարելավման և կապիտալի շարժունակության բարձրացման առումով, ուստի անհրաժեշտ է ազատականացնել ՀՀ ֆինանսական շուկան:

4. Որպես դրամավարկային քաղաքականության համակարգմանն ուղղված քայլ՝ առաջին հերթին անհրաժեշտ է դիտարկել ԵԱՏՄ պայմանագրային բազայի ամրապնդումը և կիրառումը, մասնավորապես՝ արժութային և փոխարժեքի քաղաքականությունների համաձայնեցման, ազգային արժույթների փոխարկելիության և փոխադարձ գործարքներում դրանց կիրառման՝ ԵԱՏՄ պայմանագրում և իրավական այլ ակտերում տեղ գտած դրույթները և սկզբունքները:

5. Առաջարկվում է քայլեր ձեռնարկել՝ ազատականացնելու ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսական շուկաները և առկա արժութային սահմանափակումները: Այս նպատակով անհրաժեշտ է ամրապնդել ԵԱՏՄ շրջանակներում կենտրոնական բանկերի միջև գործակցությունը՝ փոխադարձ համաձայնագրերով հասնելու ֆինանսական շուկաների ազատականացմանը:

Արժութային ներդաշնակեցման նպատակով անհրաժեշտ է բարձրացնել ազգային արժույթների օգտագործումը փոխադարձ հաշվակներում՝ հիմնվելով ԵԱՏՄ պայմանագրի հոդված 64-ի և հավելված 15-ի վրա: Պայմանավորված Հայաստանի՝ էներգակիրներ ներկրող երկրի կարգավիճակով՝ այս քայլը ՀՀ տնտեսության համար էական սոցիալ–տնտեսական դրական հետևանքներ կունենա:

ЛУСИНЕ ХАЧИКЯН

ДЕНЕЖНО-КРЕДИТНАЯ ПОЛИТИКА РА В УСЛОВИЯХ ЕВРАЗИЙСКОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ

Ключевые слова: *инфляция, фискальная и денежно-кредитная политика, инструментарий ЦБ, долларизация, отмывание денег, сильная валютная политика.*

Процесс регулирования инфляции и национальной валюты оказывает существенное влияние на рост ВВП, рост экспорта и исполнение государственного бюджета. Только согласованная фискальная и денежно-кредитная политика способствует улучшению сценария экономического развития Армении, объединенная денежно-кредитная и фискальная политика должна создать динамическую и

устойчивую макроэкономическую среду, которая обеспечит как краткосрочный, так и средне- и долгосрочный устойчивый экономический рост.

LUSINE KHACHIKYAN

MONETARY AND CREDIT POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE CONTEXT OF EURASIAN ECONOMIC INTEGRATION

Key words: *inflation, fiscal and monetary policy, CB toolkit, dollarization, money-laundering, strong currency policy.*

The process of regulation of inflation and the national currency has a significant impact on GDP growth, export growth and state budget execution. Only the agreed fiscal and monetary policy contributes to the improvement of Armenia's economic development scenario, combined monetary and fiscal policies should create a dynamic and sustainable macroeconomic environment that will enable both short- and medium- and long-term sustainable economic growth

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Նախագծերի կառավարում համատեղ ծրագիր, մագիստրատուրա, 1-ին կուրս

ՀՀ-ՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՎԻՃԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *ներգնա զբոսաշրջություն, ներքին զբոսաշրջություն, զբոսաշրջիկ, զբոսաշրջության ոչ ավանդական ձևեր, էկոզբոսաշրջություն, գնային քաղաքականություն*

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության առաջատար ոլորտներից մեկն է: Հոդվածում ուսումնասիրվել է ՀՀ զբոսաշրջության ոլորտի առկա վիճակը, բացահայտվել են խնդիրները, առաջարկվել են այն ավելի գրավիչ դարձնելու լուծումներ:

Աշխարհի զարգացած, առավել ևս զարգացող պետությունների համար տնտեսության հզորացման կարևոր գործիքներից մեկը զբոսաշրջությունն է:

Համաձայն ՀՀ ԱՎԾ վիճակագրական տվյալների՝ 2017 թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ է ժամանել 1494779 զբոսաշրջիկ, ինչը շուրջ 235 հազարով ավելի է 2016 թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Ներգնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման համար հիմք է ծառայել սահմանային անցման կետերում ուղևորների հաշվառման արդյունքում արձանագրված ՀՀ ժամանողների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ստացված ՀՀ ազգային անվտանգության ծառայության (ՀՀ ԱԱԾ) ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով:

2004–2017 թթ. ներգնա զբոսաշրջիկների քանակը ՀՀ-ում հիմնականում գրանցել է կայուն աճ: 2013 թ. ՀՀ պատմության մեջ առաջին անգամ ներգնա զբոսաշրջիկների քանակը հատել է մեկ միլիոնի շեմը՝ կազմելով 1084188: Թեև 2015 թ. Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված միջոցառումնե-